

**ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՄԵԹՈԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

Ս. Ք. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Լեզվաբանության և գրականագիտության փոխհարաբերության հարցը բանասիրության կարևորագույն պրոբլեմներից մեկն է: Գաղտնիք չէ, որ այս երկու դիսցիպլինաների փոխհարաբերության հարցը (երկու դիսցիպլինաներ, որոնք երբեմնի միասնական գիտության՝ բանասիրության երկփեղկման հետևանքն էին) վաղուց ի վեր բազմաթիվ վիճարանությունների և բազմատեսակ մեկնաբանությունների առարկա է հանդիսացել: Գրանով պիտի բացատրել այն հանգամանքը, որ այս պրոբլեմը մշտապես և այսօր էլ գտնվում է շատ բանասերների (ինչպես լեզվաբանների, այնպես էլ գրականագետների) ուշադրության կենտրոնում: Մասնավորապես կարելի է հիշատակել Ռ. Ա. Բուդաղովի հոդվածներից մեկը, որն այդպես էլ կոչվում է. «Ի՞նչ կարող է տալ լեզվի մասին գիտությունը գրականության մասին գիտությունը»¹:

Երբ համադրում ենք լեզվական տարբեր իրականություններ, պարզվում է, որ՝ այն դեպքում, երբ լեզուն օգտագործվում է որոշակի ինֆորմացիա հաղորդելու նպատակով, մարդկային հաղորդակցումը իրենից ներկայացնում է ռացիոնալ և գիտականորեն կառավարվող գործընթաց: Խոսողը ստեղծագործական պրոցեսում դիմում է լեզվի համակարգում արգեն կայուն սեղ գրադեցրած և որոշակի բովանդակություն արտահայտելու կարողություն ունեցող բառերի այս կամ այն կապակցության կամ կառուցվածքի ընտրությանը:

Այնուամենայնիվ, հաղորդակցումը չի սահմանափակվում սոսկ մարդկային գործունեության այս կամ այն ոլորտին վերաբերող ինչ-որ տեղեկությունների հաղորդմամբ: Ինչպես հայտնի է, գոյություն ունի նաև այնպիսի խոսք, որը խոսողի կամ գրողի ստեղծագործական շանքերի արդյունքն է և կատարում է գեղագիտական ֆունկցիա: Հասարակության մեջ գոյություն ունի մարդկանց մի որոշակի կատեգորիա (գրողներ, խոսքարվեստի վարպետներ), որը բառագեղարվեստական արվեստի գործեր ստեղծելու համար օգտվում է լեզվից: Ահա այս դեպքում է, որ խոսքաստեղծման արդյունքները հանգում են գեղագիտական որոշակի արժեք ունեցող արվեստի ստեղծագործության:

Այսպիսով, քանի որ գեղարվեստական ստեղծագործության հիմքում ընկած է լեզուն, ապա գեղարվեստական երկի համակողմանի ուսումնասիրությունը չի կարող չընդգրկել նաև լեզվի ուսումնասիրությունը: Խոսքը չի վերաբերում գրականագիտության այն բաժիններին (ինչպես օրինակ, գրականության պատմությունը և գրաքննադատությունը), որոնց ուսումնասիրության առարկան ընդգրկում է հասարակական կյանքում գրականության դերի, նրա զարգացման ուղիների և այս ու հարակից այլ հասկացությունները, որոնք, ըստ էության, դուրս են բուն ստեղծագործության շրջանակներից:

Վերջին ժամանակներս հրապարակ են գալիս ավելի մեծ թվով ուսումնասիրություններ՝ նվիրված «Լեզու և գրականություն» թեմային, որտեղ քննության են առնվում այս կամ այն գրողի և կամ այս կամ այն ստեղծագործության ոճի ու պոետիկայի առանձնահատկությունները, ընդ որում, կասկածից վեր է, որ ուսումնասիրության ենթարկվող տեքստը պատկանում է գեղարվեստական ստեղծագործության ոլորտին: Ստացվում է մի տեսակ փակ շրջանակ. հետազոտողները ուսումնասիրում են այս կամ այն տեքստի առանձնահատկությունները, քանի որ դա գեղարվեստական տեքստ է, իսկ գեղարվեստական է՝ համարվում, որովհետև ունի տրվյալ բառաոճական և հնչյունաոճական առանձնահատկությունները, շարահյուսական, գիծային, և հնչերանգային կառուցվածքը: Եվ այսպես էլ լիակատար պարզաբանում չի ստանում այն կարևոր հարցը, թե արդյոք ինչ արժեքների հիման վրա է, որ ուսումնասիրվող տեքստը համարվում է գեղարվեստական ստեղծագործություն²:

¹ P. A. Будагов. Что может дать наука о языке науке о литературе? В кн. Филология и культура. М., 1980.

² Այս հարցադրումը առաջ է քաշվել դեռևս 60-ական թվականներին, անգլիացի ոճաբան Վալինգի կողմից: Ss'n Vallins G. H. The Best English, London, 1963.

Այս կապակցությամբ տեղին է նշել, որ այժմ արդեն զգալի թիվ են կազմում այնպիսի աշխատություններ, որոնցում գեղարվեստական գրականության խնդիրները ուսումնասիրվում են մարքսիստական-մատերիալիստական դիալեկտիկայի դիրքերից: Ըստ երևույթին, ամենաընդհանուր մեթոդաբանական սկզբունքը, որով պետք է առաջնորդվի մարքսիստ լեզվաբանը, լեզվաբանության որ բնագավառով էլ զբաղվելիս լինի նա, լեզվի և խոսքի դիալեկտիկական միասնությունն է, այսինքն այն դրույթը, որ լեզուն գոյություն ունի խոսքի մեջ և խոսքի միջոցով: Անվիճելի է այն փաստը, որ ցանկացած տեքստի հիմքում, այդ թվում և գեղարվեստականի, ընկած է խոսքի և լեզվի այդ դիալեկտիկական միասնությունը: Հաստատված է նաև, որ այդ միասնությունը կարելի է առավել լիովին բացահայտել ուսումնասիրության լեզվաոճական մեթոդի օգնությամբ³, որի հիմքում ընկած են սովետական բանասիրական մտքի նվաճումները: Ինչպես հայտնի է, տեքստը լեզվաոճական վերլուծության ենթարկելիս այն քննության է առնվում սեմանտիկական և մետասեմիոտիկական մակարդակներում⁴:

Ուսումնասիրություն կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ խոսքային բոլոր իրակությունները, անկախ այն բանից, դրանք բառագեղարվեստական մշակույթի ստեղծագործություններ են, թե ինֆորմատիվ, բխում են մի միասնական հիմքից, որն է գրական լեզուն: Սովետական լեզվաբանության մեջ ընդունված են մի շարք հասկացություններ, որոնք ընկած են այդ բնագավառի ուսումնասիրությունների հիմքում: Դրանցից ամենակարևորը գրական լեզվի և գեղարվեստական գրականության լեզվի փոխհարաբերությունն է⁵, թեև գեղարվեստական գրականության լեզուն չի նույնանում գրական լեզվին, այնուամենայնիվ, դրանք երկուսն էլ հարաբերական հասկացություններ են, և գեղարվեստական գրականությունն ընդհանուր առմամբ ստեղծվում է գրական լեզվի հիման վրա: Մի կողմից գեղարվեստական գրականության լեզուն գրական լեզվի ոճերից մեկն է, իսկ մյուս կողմից այն արտացոլում է հասարակաբանական, բարբառային և լեզվական այլ կարգի երևույթներ, որոնք ըստ էության դուրս են մնում բուն գրական լեզվի (գրական նորմայի) շրջանակներից: Այդ ընդհանուր հիմք հանդիսացող գրական լեզվի ուսումնասիրության համար, որը միավորում է ամեն տիպի խոսքային իրակություններ՝ անկախ ոճական պատկանելիությունից, մշակված են հետազոտական սկզբունքներ ու մեթոդներ, որոնցից առավել արդյունավետ է վերջը նշված լեզվաոճական վերլուծության մեթոդը: Այն հանգամանքը, որ ուսումնասիրության սեմանտիկական և մետասեմիոտիկական մակարդակները դիտարկվում են իրարից զատ, իհարկե պայմանական երևույթ է, քանի որ իրականում դրանք մշտապես գտնվում են փոխազդեցության և փոխադարձ կապի մեջ: Այլ կերպ ասած, սա դիալեկտիկական փոխազդեցություն է լեզվի (սեմանտիկական մակարդակ) և խոսքի (մետասեմիոտիկական մակարդակ) միջև:

Սակայն հայտնի է, որ, երբ դիմում ենք գեղարվեստական գրականությանը, լեզվի և խոսքի փոխազդեցությունը առավել բարդ ու անուղղակի է դառնում, քան լեզվի և առօրյա խոսքի կամ լեզվի և գիտական խոսքի հարաբերությունն է: Պարզվում է, որ այդ դեպքում լեզվաոճական վերլուծությամբ սահմանափակվել շինք կարող: Ահա այստեղ կարևոր նշանակություն է ձեռք բերում լեզվաոճական և լեզվաբանաստեղծական վերլուծությունների սահմանազատման հարցը⁶:

Լեզվաբանաստեղծական վերլուծությունը կոչված է բացահայտելու լեզվի և պոետիկայի դիալեկտիկական, այսինքն՝ գեղարվեստական ստեղծագործության բառային հյուսվածքի և գեղարվեստական կոմպոզիցիայի փոխհարաբերությունը: Լեզվաբանաստեղծական վերլուծության զեպչում հետազոտման օբյեկտը ոչ թե գեղարվեստական տեքստն է որպես այդպիսին, այլ բանարվեստի ամբողջական, առանձնահատուկ և անկրկնելի ստեղծագործությունը: Լեզվաբանաստեղծական ուսումնասիրությունն ուղղված է ոչ թե լեզվական միջոցների, ոճական հնարանների հայտնաբերմանը, այլ հուզական, գեղագիտական այն ազդեցության բացահայտմանը, որով օժտված է գեղարվեստական ստեղծագործությունը⁶: Լեզվաոճական և լեզվաբա-

³ Sb' u Linguostylistics: Theory and Method. Ed. by Olga Akhmanova. M., 1972; Olga Akhmanova. Rolandas, Idzelis. What is the English We Use. M., 1978.

⁴ Այդ ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել Գ. Օ. Վինոկուրը: Sb' u, օրինակ, Г. О. Винокур. Избранные работы по русскому языку. М., 1959:

⁵ Sb' u Օ. С. Ахманова. Словарь лингвистических терминов: М., 1969, с. 488.

⁶ Այս հարցը հատուկ քննության է ենթարկվել Վ. Վ. Վինոգրադովի աշխատություններում: Sb' u, օրինակ, В. В. Виноградов. О языке художественной литературы, М., 1959:

⁷ Sb' u В. Я. Задорнова. Восприятие и интерпретация художественного текста, М., 1984,

Ս. Ք. Գասպարյան, Գրական երկի սկզբունքային տարրերությունը այլ բնույթի ստեղծագործություններից, — «Բանբեր Երևանի համալսարանի», 1984, № 1:

⁸ Այսպիսի վերլուծության նմուշներ կարելի է գտնել Վինոգրադովի, Շչերբայի, Տոմաշևսկու, Բուզադովի մոտ: Sb' u В. В. Виноградов. О теории художественной речи, М., 1971,

նաստեղծական վերլուծությունները տարբերվում են հետազոտության նպատակաուղղվածության տեսանկյունից: Առաջին դեպքում խոսքը վերաբերում է տեքստի նկարագրման տեխնիկական հնարքների բացահայտմանը, իսկ երկրորդ դեպքում՝ գեղարվեստական ստեղծագործության ընկալմանը: Հիմնվելով լեզվաոճական ուսումնասիրության արդյունքների վրա և կատարելով տեքստի լեզվաբանաստեղծական վերլուծություն, հետազոտողը կարողանում է ցույց տալ այն փոխադարձ կապը, որ գոյություն ունի ստեղծագործության կառուցվածքի և կոնկրետ լեզվական փաստերի միջև:

Կարևոր է ընդգծել, որ ստեղծագործության պատկերների համակարգը պատկանում է լեզվաբանաստեղծական ուսումնասիրության ոլորտին, քանի որ պատկերի խոսքային մարմնավորման, գեղարվեստական պատկերի ձևավորման մեջ բառի դերի և այս կարգի այլ հարցեր, իհարկե, չեն կարող լուծում ստանալ լեզվաոճաբանության շրջանակներում: Այս կապակցությամբ հիշատակելով ակադ. Վ. Վ. Վինոգրադովի դրույթն այն մասին, թե «գեղարվեստական պատկերի պրոբլեմը վերաբերում է ոչ միայն լեզվաբանությանը, այլ նաև գրականության տեսությանը», կարելի է վստահ ասել, որ պատկերը գտնվում է տեքստի լեզվաբանաստեղծական մեկնաբանության կենտրոնում⁹: Լեզվաբանաստեղծական վերլուծությունն առավել բեղմնավոր է, երբ ուսումնասիրվող ստեղծագործությունը համադրվում է նույն հեղինակի այլ գործերի հետ, երբ հետազոտողին ծանոթ է նրա գեղարվեստական մտածելակերպը, նրա աշխարհընկալումն ու պատկերների համակարգը:

Տեքստի վերլուծության այս երկու եղանակների սահմանազատումը շատ կարևոր է մեթոդաբանական տեսանկյունից, քանի որ այն նախ հնարավորություն է տալիս սահմանազատելու գեղարվեստական ստեղծագործությունը ոչ գեղարվեստականից և ապա բացահայտում լեզվաոճական վերլուծության ձևական էությունն ու սահմանափակ դերը գեղարվեստական գրականության ուսումնասիրության համար, թեև սա ամենևին էլ չի նշանակում, թե վերլուծության այս երկու ձևերը գործնականում չեն կարող համակցվել և լրացնել միմյանց:

Գեղարվեստական գրականության լեզվի ուսումնասիրության բնագավառում ձեռք բերված հաջողությունների թվին անկասկած կարելի է դասել նաև այն հետազոտությունները, որոնցում ստեղծագործության լեզուն դիտարկվում է պատմա-բանասիրական տեսանկյունից: Նկատի ունենք պատմա-բանասիրական այն ինֆորմացիան, որը օբյեկտիվորեն ընկած է գրական ստեղծագործության հիմքում և մի յուրօրինակ ֆոն է ստեղծում նրա համար: Այն դրսևորվում է նյութական մշակույթի առարկաների, ակնարկների, հղումների և մեջբերումների ձևով, որոնք էլ հաճախ ճիշտ չեն ընկալվում ընթերցողի կողմից¹¹:

Այնուամենայնիվ հասկանալի է, որ այն ամենը, ինչ նշվեց, առարկայի սոսկ ձևական կողմն է, որը առավել կամ պակաս դժվարությամբ ընկալում է հետազոտողը: Նույնիսկ լեզվաբանաստեղծական մակարդակը, որն ավելի բարձր է կանգնած լեզվաոճականից, գեղարվեստական ստեղծագործության ընկալման սոսկ նվազագույն մակարդակն է: Գրական ստեղծագործությունը, որն արվեստի յուրահատուկ ձևերից է, իր էությունը այնքան բարդ ու բազմազան է, որ նրա ուսումնասիրությունը չի կարող սահմանափակվել միայն նրա ոճի և կոմպոզիցիայի պարզաբանմամբ:

Հայտնի է, որ գեղարվեստական գրականությունը հասարակական գիտակցության ձևերից մեկն է և որպես այդպիսին այն բնութագրվում է երեք հիմնական գծերով, որոնք գտնվում են օրգանական միասնության մեջ. դրանք են՝ ճանաչողական, գեղագիտական և գաղափարախոսական: Ցուրաքանչյուր ստեղծագործություն ունի իրեն հատուկ գաղափարական ուղղվածություն, արտահայտում է այս կամ այն աշխարհայացքը, հեղինակի այս կամ այն գեղագիտական գիրքորոշումը: Եթե լեզվի և պոետիկայի հարաբերակցության, այսինքն՝ ստեղծագործության կառուցվածքի և կոնկրետ լեզվական փաստերի փոխադարձ կապի բացահայտումը այնքան էլ դյուրին գործ չէ, ապա ավելի մեծ բարդություն է ներկայացնում ստեղծագործության լեզվի և երազաղափարական բովանդակության փոխադարձ կապը գտնելը: Այդ դեպքում դիալեկտիկական միասնության երկու անդամների միջև եղած տարածությունը զգալիորեն

Л. В. Щерба. Опыт лингвистического толкования стихотворений. «Воспоминание» Пушкина.—В кн. Избранные работы по русскому языку, М., 1957, В. В. Томашевский. Пушкин. Кн. 1—2. М.—Л., 1956, Р. А. Будагов. Стилистическое новаторство «Мертвых душ» Н. В. Гоголя (От стиля к мировоззрению), М., 1980:

⁹ Մեր կողմից փորձ է արված լեզվաբանաստեղծական վերլուծության ենթարկել ամենատարածված ոճական միջոցներից ժեկը՝ գեղարվեստական համեմատությունը: Տե՛ս С. К. Гаспарян. Лингвопоэтика образного сравнения. Ереван, изд.-во ЕГУ, (в печати).

¹⁰ В. В. Виноградов. Стилистика, Теория поэтической речи. Поэтика. М., 1963.

¹¹ Տե՛ս И. В. Гюббенет. К проблеме понимания литературно-художественного текста (на английском материале), М., 1981:

մեծանում է: Պետք է նշել, որ, իհարկե, փորձեր արվել են լեզվաոճական վերլուծության մեթոդը առավելագույն շահով ստեղծագործության բովանդակությանը մոտեցնելու: Վերլուծության երկու մակարդակները (սեմանտիկական և մետասեմանտիկական) լրացվել են երրորդով՝ մետամետասեմանտիկական մակարդակով¹², որը արտացոլում է ստեղծագործության գաղափարը և, ըստ էության, դուրս է մնում ոճագիտության շրջանակներից: Այնուամենայնիվ, մեծա- և մեծամեծա— մակարդակների միջև մնում էր անհաղթահարելի մի անդունդ: Անհասկանալի էր, թե ինչպես կարելի է ոճի վերլուծությունից անցում կատարել դեպի գաղափարների վերլուծության բնագավառը: Ըստ երևույթին լեզվաբանաստեղծական վերլուծությունն է, որ պիտի լցնի այդ անդունդը:

Այս կապակցությամբ տեղին է հիշատակել Ա. Վ. Չիչերինի մի աշխատությունը, որն այդպես էլ կոչվում է՝ «Գաղափարներ և ոճ»¹³: Այստեղ նա զարգացնում է այն միտքը, թե գեղարվեստական ստեղծագործության լեզվի միջոցով է արտահայտվում հեղինակի մտածելակերպն ու աշխարհայացքը: Չիչերինի կարծիքով, հեղինակի մտքի և լեզվի միջև եղած կապը առավել հեշտ է նկատել ստեղծագործության շարահյուսական կառուցվածքում:

Ծթե մինչև հիմա գրականագետները սահմանափակվում էին նրանով, որ նշում էին ստեղծագործության հասարակական նշանակությունը, նրա ստեղծման պատմամշակութային և քաղաքական նախադրյալները, տվյալ ստեղծագործությունը վերագրելով այս կամ այն ժանրին և այս բաղաձր կապելով ստեղծագործության գաղափարական բովանդակության մեկնարանման հետ, ապա վերջին ժամանակներս նրանք ավելի հաճախ են հանգում այն մտքին, որ անհրաժեշտ է ուսումնասիրել ստեղծագործության լեզուն, նրա բուն բառային հյուսվածքը¹⁴: Այս երևույթը ծայրահեղ դրսևորումների հասավ կառուցվածքային գրականագիտության մեջ, որի ներկայացուցիչները¹⁵ գտնում են, որ լեզվի և գեղարվեստական գաղափարի միջև ընկած փոխադարձ կապը ստեղծագործության մեջ ընդունակ են տեսնելու և բացատրելու միայն գրականագետները՝ առանձնահատուկ զգրականագիտական ներթափանցմանը՝ Մշ վերաբերում է լեզվաբաններին, ապա նրանք պետք է բավարարվեն լեզվական և լեզվաոճական տվյալներով, որ նրանց մատուցում է գեղարվեստական գրականությունը: Սա, իհարկե, ճիշտ մոտեցում չէ:

Գեղարվեստական գրականությունը հետազոտողների հիմնական խնդիրն է ոչ թե հնարավորին շահի հստակ սահմանազատել լեզվաբանի և գրականագետի գործունեության ոլորտները, այլ կարողանալ ուսումնասիրել ստեղծագործությունը՝ մի կողմից՝ որպես լեզվի, ոճի և կոմպոզիցիայի միասնություն, մյուս կողմից՝ որպես հեղինակի գեղարվեստական մտածելակերպի, աշխարհայացքի և գաղափարախոսության միասնություն: Այլ կերպ ասած, պետք է կարողանալ բացահայտել ձևի (որթան էլ այն բարդ ու բազմազան լինի) և բովանդակության գիտելիքի միասնությունը:

Ո՛չ լեզվաոճական և ո՛չ էլ նույնիսկ լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդները չեն կարող ներթափանցել այս միասնության բուն էության մեջ, քանի որ նրանք հանգես են գալիս որպես ստեղծագործության ձևը ուսումնասիրող մեթոդներ: Ընթացքում է, որ գրան կարելի է հասնել միայն լեզվաոճական, լեզվաբանաստեղծական և գրականագիտական վերլուծությունների զուգորդմամբ: Գեղարվեստական ստեղծագործության ուսումնասիրման լեզվաբանական և գրականագիտական մեթոդների խիստ հակադրումը մեթոդաբանական տեսանկյունից անարդյունավետ է, քանի որ այն խախտում է ձևի և բովանդակության գիտելիքի կապը փոխկապվածությունը ստեղծագործության ամբողջության մեջ, անջատում մի մասը մյուսից:

Բովանդակության և ձևի փոխազդեցությունը դիտելիքի կապական հակադրությունների փոխհարաբերության բնորոշ դեպքերից մեկն է: Գրականագիտության մեջ ձևի և բովանդակության միջև եղած խզումը դեռևս հաղթահարված չէ: Գրա պատճառներից մեկը, ըստ երևույթին, գեղարվեստական ստեղծագործության մեջ այդ երկու կողմերի հարաբերակցության ոչ ճիշտ ըմբռնումն է: Հայտնի է, որ մարքսիստական գեղագիտության մեջ գոյություն ունի բովանդակության որոշիչ դերի մասին դրույթը: Սակայն այն, որ բովանդակությունն առաջնային է, իսկ ձևը՝ երկրորդային, հաճախ հասկացվում է մեխանիկորեն և հանգեցնում այն մտքին, որ բ-

¹² Olga Akmanova, Rolandas, Idzelis. 1978.

¹³ А. В. Чичерин. Идея и стиль. О природе поэтического слова, М., 1968.

¹⁴ Այս ուղղությամբ առանձին արժեքավոր դիտողություններ կան Հայ գրականագիտական և լեզվաբանական ուսումնասիրություններում: Տե՛ս, օրինակ, Վ. Տերյան, Հայ գրականության գալիք օրը, Եր., 1975, հ. 3, Պ. Սևակ, Հանուն և ընդդեմ «եռալիզմի նախահիմքերի», «Ինչ-ը, ինչպես-ը և որպես-ը», Եր., 1974, հ. 5, Լ. Հարությունյան, Լեզվի մասին, Տեղեկագիր մարգ-սիզմ-լենինիզմի ինստիտուտի, 1934, № 3 և այլն:

¹⁵ Տե՛ս Ս. М. Топер. Овладение реальностью: Статьи, М. 1980; Ю. М. Лотман. Анализ поэтического текста. Структура стиха. Л. 1972, նույնի Структура художественного текста. «Искусство»,—М. 1970:

վանդակությունը գոյություն ունի արվեստի ստեղծագործությունից դուրս, նրանից զատ: Ստեղծագործության մտահղացումը, նրա գաղափարի, կերպարների մասին պատկերացումը, թերևս, արվեստագետի գիտակցության մեջ առաջանում է ավելի վաղ, քան այն իր մարմնավորումն է գտնում գեղարվեստական ստեղծագործության մեջ: Սակայն այդ մտահղացումը դեռևս ստեղծագործության բովանդակությունը չէ, քանի որ գրական ստեղծագործության բովանդակությունը ամփոփված է հենց իր մեջ, այն կարող է գոյություն ունենալ միայն որոշակի ձևի մեջ: Մյուս կողմից, ինչպես հայտնի է, ձևը գեղարվեստական ստեղծագործության մեջ նրա բովանդակության գոյության և զարգացման, նրա կոնկրետ մարմնավորման և արտահայտման միջոցն է: Ձևի և բովանդակության այս անբախտելի միասնությունը անհրաժեշտ է ելակետային համարել գրական երկի հետազոտության ժամանակ:

Ասվածից հետևում է, գեղարվեստական ստեղծագործության լիարժեք բանասիրական ընկալումը մենք է որպես մեթոդաբանական հիմնական պրոբլեմներից մեկը, որի լուծման ճանապարհին առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում բանասիրության միասնականության հարցը¹⁶:

С. К. ГАСПАРЯН—**Некоторые методологические вопросы изучения словесно-художественного творчества.**—Настоящая статья посвящена одному из важнейших аспектов изучения словесно-художественного творчества—вопросу о его методологии. Центральной методологической проблемой в этой области является вопрос о соотношении языкознания и литературоведения. В статье ставится вопрос о необходимости рассмотрения этих двух дисциплин в диалектическом единстве при обращении к изучению словесно-художественного творчества. В этой связи автор статьи указывает на незаменимую роль лингвопоэтического анализа, который в отличие от лингвостилистического, призван раскрывать сложное, диалектическое взаимоотношение между языком произведения словесно-художественного творчества и его поэтикой, дает возможность отличения художественного произведения от нехудожественного, а также раскрытия формальной сущности лингвостилистического анализа. Предполагается, что достичь этого можно лишь путем сочетания лингвостилистического, лингвопоэтического и литературоведческого анализов произведения.

¹⁶ Իր վերը նշված աշխատության մեջ Ռ. Ա. Բուդաղովը գրում է. «Ցանկացած գեղարվեստական ստեղծագործության ձևի և բովանդակության փոխազդեցությունը, նրա գեղարվեստական միտումի լեզվական ձևի փոխկապվածությունը միշտ եղել են և կմնան որպես բանասիրության հանգուցային հարց: Այդ փոխազդեցությամբ է պայմանավորված լեզվի մասին գիտության կապը գրականության մասին գիտության հետ»: